ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (11.09.2023թ.-21.12.2023թ.), ԵՐԿՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐԻ (21.11.2023թ., 12.12.2023թ.) ԵՎ ՄԵԿ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (22.12.2023թ.) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2023 թվականի սեպտեմբերի 11-ին և ավարտվել դեկտեմբերի 21-ին:

Գումարվել է՝

- 5 հերթական,

- 2 արտահերթ նիստ՝ նոյեմբերի 21-ին և դեկտեմբերի 12-ին:

Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 1 արտահերթ նստաշրջան՝ դեկտեմբերի 22-ին:

Ազգային ժողովն ընդունել է 165 օրենք, որից՝

- 5-ը «մայր» օրենքներ են՝ («Շուկայի վերահսկողության մասին», «Էկոպարեկային ծառայության մասին», «Զբոսաշրջության մասին», «Պրոբացիայի ծառայության մասին» և «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2022 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»):

- 151՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,

- 9՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 142-ի հեղինակը Կառավարությունն է, 23-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 8-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 9-ինը՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը, 4-ինը՝ Արտաքին հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովը, 6-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 14-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 41-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ինը՝ Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 29-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 51-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը և 8-ինը՝ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝

- **ընդունել է՝**

- «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը:

- **ընտրել է՝**

- Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թեկնածու (Նաիրա Հովսեփյան)
- Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի թեկնածու (Դավիթ Խաչատուրյան)
- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածու (Սերգեյ Մարաբյան)
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներ (Հասմիկ Հակոբյան, Նունե Հախվերդյան)
- Հաշվեքննիչ պալատի անդամ (Հակոբ Միհրանյան),

- **նշանակել է՝**

- Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ (Մանվել Բադալյան)